

Յ Ա Յ Տ Տ Ա Ր Ա Վ Ո Ւ Ե Ր Ի Ւ Խ

Ս. Աթոռոյս Կիւլպէնկեան Մատենադարանը անցեալ ամիս բոլորից իր տասնեւ հնգամեակը, ակսեալ իր բացումի օրէն:

Ուրախ ենք յայտնելու որ այս ժամանակաշրջանին Մատենադարանը հետզհետէ կրցաւ արժեւորել ինքզինք ու իր տեսակով առաջնակարգ դիրք՝ մը՝ գրաւել, ինչպէս է ան ներկայի բովանդակ Մերձաւոր Արքեւելքի մէջ։ Պարագայ մը այս՝ որ սահմանուած է յաւերժացնելու յիշատակը Լուսահոգի ու երանեալ Գուրեան Պատրիարքի, որ ներշղնչող եղաւ այս Հաստատութեան, նոյնատեւ եւ փառաւորելու անունը Մեծ Քարերար Վսեմ. Գալուստ Պէյ Կիւլպէնկեանի, որ պատկառելի նույրատուութեամբ մը արձանացուց զայն Սիրոնի նույրական այս բարձունքին վրայ։

Երանի՛ անոր որ յիշատակ մ'ունի Սիրոնի վրայ . . . :

Տասնեւինգ տարուան այս շրջանին, Մատենադարանը կարելի իր նպաստը բերաւ բոլոր անոնց որ դիմեցին իր հատորներէն օգտուելու և լուսաւորուելու, սորվելու եւ սորվեցնելու։ Ու կը շարունակէ ան նոյնը ընել հետզհետէ աւելի նոխացած տուեալներով եւ լաւագոյն պայմաններով ու յարմարութիւններով, որոնք ծեռու բերուած են ու կը քերուին Ս. Աթոռոյս Ազնուական Բարիքարին օժանդակութեամբ եւ Ամեն. Ս. Պատրիարք Հօր ու Տնօրին Ֆողովոյ բարեհան կարգակրութիւններով։ Վասնզի Ս. Յակոբանց Մենաստանը կ'ուզէ հաւատարմօրէն նետեւելի իր գարաւոր աւանդութեան ու մնալ իբրեւ մէկը Հայութեան լուսատու կեդրաններէն եւ Հայ Մշակոյթի արժէքներուն գանձապահը՝ միշազգային ու սրբազն այս բաղարին մէջ։

Այս առթիւ Նորին Ամեն. Ս. Պատրիարք Հօր արտօնութեամբ կը յայտարարենք.

- 1) — Եթէ կան անձեր կամ Միութիւններ որ գիրքերու կամ թերթերու հաւաքածոներ ունին ու Կ'ուզեն վաճառել զանոնք՝ թող համին գրել մեզի եւ ներկայացնել իբենց պայմանները։
- 2) — Կը խնդրենք բոլոր գրողներէն ու հրատարակիններէն որ բարի ըլլան իբենց հեղինակութիւններէն կամ հրատարակութիւններէն գոնէ մէկ-ական օրինակ դրվել յատկապէս Մատենադարանին, անկախարար Սի՛ն ամսագրին դրկուածներէն։
- 3) — Գրասէր յարգոյ հասարակութեան կը ծանուցաններ թէ Մատենադարանը բաց է ամենուն առջեւ անխոտիր, ամէն օր որոշ պահերու մէջ։

ՏԵՍՈՒԹՅ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ
ՑԻՐԱՅՐ ՎՐԴ. ՑԷՐԱՅՐԵՆԱՆ

Մատենադարանի վերաբերեալ ու է առաքում կամ թղթակցութիւն ուղղել հետեւեալ հասցէին. —

GULBENKIAN LIBRARY
OF THE
ARMENIAN PATRIARCHATE
JERUSALEM (PALESTINE)

Կը ծանուցանենք եկեղեցասեր Հայ հաւատացեալներուն քէ
Կիրակի, 30 Նոյեմբեր 1947, Ս. Յարութեան Տաճարէն պիտի
ձայնասփռուի Հայկ. Ս. Պատարագի աշարողութիւնը, առաւտօ-
եան ժամը 10-11:

ՄՈՏ ՕՐԵՆ ԼՈՅՍ ԿԸ ՏԵՍՆԵ

ՇԱՐԱԿԱՆՔ ՀԱՆԳՈՒՏԵԱՆ
ՕՐՀՆՈՒԹԻՒՆՔ ԱՊԱՇԽԱՐՈՒԹԵԱՆ
ՄԵԾԱՑՈՒԽՑՔ, ՇԱՐԱԿԱՆՔ ԽԱԶԻ
ԵՒ ՀԱՄԲԱՐՁԻՔ ԵՒԱՅԼԻ

Բ. ՅՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿ Ե

ԺԱՎԱԳԻՐՔ
ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՅ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻՈՅ
ԱՐԱՐՈՒԱՅ,
Ս. ՍԱՀԱԿԱՅ ՀԱՅՐԱՊԵՏԻ
ԵՒ
ՄԵՍՐՈՊԱՅ ՎԱՐԴԱՊԵՏԻ
ԳԻՒՏՈՅ ԵՒ
ՅՈՎՀԱՆՈՒԻ ՄԱՆԴԱԿՈՒՆԻՈՅ

Զ. ՅՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

"SION," an Armenian Monthly of Religion, Literature and Philology
Printed in
JERUSALEM — PALESTINE